ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ

Այս տարվա հունվարի 30-ից մինչև փետրվարի 7-ը Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում իր աշխատանքներն անցկացրեց համամիութենական ակուստիկական IV կոնֆերանսը։

Կոնֆերանսում գործում էին 18 սեկցիաներ, որտեղ լսվեցին 700-ից ավելի զեկուցումներ։ Քննարկվող հարցերի մեջ մեծ տեղ էին գրավում այնպիսիները, որոնք անմիջականորեն բխում էին արտադրական ու կենցաղային առօրյայից, վեր էին հանում գործնական ու գիտական լուծում պահանջող բազմաթիվ հուզող պրոբլեմներ։ Նման հարցերի էին նվիրված «Շինարարական ու ճարտարապետական ակուստիկա», «Արտադրական աղմուկներ», «Տրանսպորտային աղմուկներ», «Աղմուկների ու վիբրացիաների ներգործությունը մարդկանց վրա» սեկցիաներում լսված շատ զեկուցումներ։

Ուլտրաձայնի, պինդ մարմինների, համաշխարհային ակուստիկայի զարգացման հարցերին էին նվիրված արտասահմանյան մի քանի գիտնականների զեկուցումներ՝ Ռ. Ռոդ, Ի. Տոլստոյ (ԱՄՆ), Ռ. Ստիվենս (Անգլիա), Ի. Մալեցկի (Լեհաստան) և ուրիշներ։

Գործնական ու գիտական հրատապ հարցադրումներով մեծ հետաքրքրություն էին ներկայացնում «Խոսքի» ու «Լսողության» սեկցիաները։ Այս սեկցիաներում լսվող զեկուցումներում ներկայացնում էին պրոբլեմներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է գիտության մի քանի բնագավառների համագործակցում։

Կոնֆերանսը ցույց տվեց, թե ինչպես առաջին հայացքից իրար խորթ թվացող գիտության ճյուղեր իրականում գտնվում են սերտ համագործակցության մեջ, և այս ճանապարհն է, որ կարող է հասցնել ժամանակի ներկայացրած շատ ու շատ պրոբլեմների լուծմանը։ Այս տեսանկյունից մոտենալով հարցին, լեզվաբանական, հոգեբանական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են լեզվի հնչյունական կազմի ուսումնասիրությունը, լեզվի ու խոսքի ըմբռնումը, դրանց ինտոնացիոն առանձնահատկությունները և այլն, հարցեր են, որոնց պատասխանները մենք կարող ենք գտնել միայն լեզվաբանության ու ֆիզիկայի, հոգեբանության ու ֆիզիոլոգիայի խաչմերուկներում։ Նման հարցերին էին նվիրված Վ. Ա. Արտյոմովի, Է. Ա. Հարությունյանի, Մ. Պ. Գրոստրեմի, Վ. Ա. Կոժևնիկովի, Վ. Ի. Իլյինի, Ի. Ա. Զիմնյայայի, Վ. Ի. Գալունովի, Լ. Ա. Զիստովիչի և շատ ուրիշների զեկուցումները։

• • •

Համամիութենական ակուստիկական IV կոնֆերանսից մի քանի օր անց՝ փետրվարի 8-ին, Մոսկվայի Մորիս Թորեզի անվան I պետական մանկավարժական օտար լեզուների ինստիտուտի դահլիճում բացվեց համամիութենական սիմպոզիում՝ նվիրված ինտոնացիայի հարցերին։

Բացի գիտական պրոբլեմների ու նոր հարցադրումների քննարկումից, այդ սիմպոզիումը գործնականորեն ի մի հավաքեց մեկ ու կես տարում Միության գիտական ու մանկավարժական տարբեր կենտրոններում ինտոնացիայի ուսումնասիրության բնագավառում կատարված աշխատանքները և նշեց այն ուղիները, որոնք անհրաժեշտ են լեզվի ու խոսքի ինտոնացիայի բնագավառում տարվող հետագա աշխատանքների համար։

Լեզվի ինտոնացիան, որպես ազգային լեզուների կարևորագույն բաղադրիչներից մեկը, պետք է ուսումնասիրվի բազմակողմանիորեն՝ հոգեբանական, լեզվաբանական, ֆիզիկական ու ֆիզիոլոգիական տեսանկյուններից։ Նման մոտեցումը միայն կարող է վեր հանել լեզվի ինտոնացիայի բարդ կառուցվածքը և նշել այս ուղիները, որոնք կօգնեն ինչպես մայրենի լեզվի ճիշտ յուրացման, այնպես էլ օտար լեզուների ուսուցման ու յուրացման գործին։ Այս առումով սիմպոզիումը բարձրացրեց նաև լեզվի նորմավորման մի քանի հարցեր։

Մեծ հետաքրքրությամբ լսվեցին Օ. Ս. Ախմանովայի «Նորմայի խնդիրը գերսեգմենտային հնչյունաբանության բնագավառում», Տ. Գ. Եգորովի «Ինտոնացիայի ֆունկցիոնալ բնույթի հարցերը», Լ. Ռ. Զինգերի «Ինտոնացիայի հընչութաբանության հարցի շուրջը», Վ. Ա. Արտյոմովի «Խոսքի ինտոնացիայի կառուցվածքային վերլուծության մեթոդը», Ն. Դ. Սվետոզորովայի «Ինտոնացիայի ուսումնասիրման մի քանի սկզբունքների մասին», Ի. Ա. Զիմնյայայի «Ինտոնացիայի ընկալումը» և շատ ուրիշ զեկուցումներ, որոնք շեշտում էին ինտոնացիայի, որպես լեզվի կարևորագույն բաղադրիչներից մեկի բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը։ Սիմպոզիումը նշեց, որ առաջադրված հարցերի դիտական լուծման համար

անհրաժեշտ է գիտական ու մանկավարժական կենտրոններում (նկատի ունենալով առանձին հանրապետություններ) զարգացնել փորձառական ու գործիքային (ինստրումենտալ) լեզվաբանություններ, ներգրավելով այդ աշխատանքների մեջ բացի լեզվաբաններից նաև ֆիզիկոսների ու ֆիզիոլոգների, հոգեբանության ու տեխնիկայի բնագավառների աշխատողների։

Սիմպոզիումում լսվեցին քսանհինգ զեկուցումներ։

Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐ

● Հայ ժողովրդի պատմության, լեզվի և հոգևոր մշակույթի ուսումնասիրության երախտավորների մեջ իր հատուկ և արժանավոր տեղն ունի ականավոր լեզվաբան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր Գրիգոր Այվազի Ղափանցյանը, որի ծննդյան 80-ամյակը լրացավ վերջերս։ Գ. Ղափանցյանը ծնվել է 1887 թ. Աշտարակում. նախնական կրթությունն ստացել է տեղի երկդասյան դպրոցում։ 1908 թ. նա ընդունվում է Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետի հայվրացական բանասիրության բաժին։ Ստանալով լեզվաբանական լուրջ պատրաստություն, 1913 թ. առաջին կարգի դիպլոմով ավարտում է այն և վերադառնում Հայրենիք։

1913 թ. մինչև 1918 թ. նա Էջմիածնի Գևորգյան ճեմարանում զբաղվում է գիտա-մանկավարժական գործունեությամբ. դասավանդում է ընդհանուր լեզվաբանություն, հայերենի համեմատական քերականություն։ Գ. Ղափանցյանի գիտական առաջին աշխատանքները տպագրվում են «Արարատ» ամսագրում, 1914 թ. («Ինքնուրույն մի քանի հուշարձաններ», «Լեզվաբանական դիսցիպլիններ և լեզու»)։

Երևանի պետական համալսարանի հիմնադրման առաջին իսկ օրից Գ. Ղափանցյանը դասավանդել է գրաբար, հայերենի պատմա-համեմատական քերականություն, ուրարտերեն, ընդհանուր լեզվաբանություն։ Այդ մասնագիտությունների գծով պատրաստել է ասպիրանտներ։

1943 թ., երբ հիմնադրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, Ղափանցյանը դառնում է նրա հիմնադիր անդամներից մեկը։ Մոտ 5 տարի նա ղեկավարել է գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքը, իսկ 1950 թ. մինչև 1956 թ.՝ լեզվի ինստիտուտը։

Ակադեմիկոս Ղափանցյանի գիտական հետազոտությունները նվիրված են հայագիտության կարևոր պրոբլեմներին, հայ ժողովրդի, նրա լեզվի և կուլտուրայի զոյացման ու հետագա զարգացման խնդիրներին։ Դրանցից հատկապես պետք է նշել «Chetto-Armeniaca», «Ընդհանուր լեզվաբանություն», «Ուրարտուի պատմություն», «Խեթական ասույթները հայերի մոտ», «Հին Հայաստանի տեղանունների պատմա-լեզվաբանական նշանակությունը», «Արա Գեղեցիկի պաշտամունքը», «Հայոց լեզվի ծագման հարցի շուրջը», «Հայաստան՝ հայերի բնօրրան», «Հայոց լեզվի պատմություն» (հին շրջան) և այլն։

Ստուգաբանելով հայերենի մի շարք բառեր և բացատրելով լեզվական երևույթներ, Ղափանցյանը վերականգնեց կուլտուր-պատմական այն կապերը, որ հայ ժողովուրդը ունեցել է իր շրջապատի հնագույն ցեղերի ու ժողովուրդների հետ՝ մեր դարաշրջանից հազարամյակներ առաջ։

Ղափանցյանը նաև նշանավոր պատմաբան էր և հնագետ։ Նույնիսկ նրա բանասիրական և լեզվաբանական աշխատությունները, իրենց խոր պատմական մոտեցմամբ, տարբերվում են սովորական լեզվաբանական բնույթի աշխատություններից։ Նրանց մեջ տրված են հետազոտման ենթակա երևույթների պատմական միջավայրն ու բաղաքական-տնտեսական հանգամանքները։ Պատմաբանն ու լեզվաբանը օրգանապես մուլված են Ղափանցյանի՝ որպես գիտնականի կերպարի մեջ։

● Սովետական գրականության հիմնադիրներից է Մարիետա Սերգեյի Շահինյանը։ Գրական գործունեության 65 տարիներին ընթացքում նա ստեղծել է մոտ ութ տասնյակ գիրք, գրել հարյուրավոր ակնարկներ և հոդվածներ սովետական առօրյայի ամենաբազմազան հարցերի շուրջը, ստեղծել գիտական մեծարժեք ուսումնասիրություններ ու հետազոտություններ։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի առաջին տարիներին նա գրում է Ռուսաստանի հարավում տեղի ունեցած քաղաքացիական կռիվներին նվիրված «Փոփոխություն» վեպը, որն արժանանում է Վ. Ի. Լենինի գովասանքին։ 20-ական թթ. կեսերին Մ. Շահինյանը գրում է «Վերնախավի տիկնոջ արկածները» վեպը, ուր ստեղծում է աշխարհը վերափոխողների՝ բոլշևիկների կերպարը։